

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2026 թվականի N 870-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 815-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 29-ի N 477 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 815-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ բառերով.

2) որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ակադեմիա) կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով՝

«1.1. Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:».

4) 3-րդ կետի 1-7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) խորհրդատվական, փորձագիտական ու գիտամեթոդական ծառայությունների մատուցում.

2) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում ու դրա արդյունքների իրացում.

3) ակադեմիայի աշխատողների հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:».

2. Ակադեմիայի նախագահի պաշտոնակատար (այսուհետ՝ նախագահի պաշտոնակատար) նշանակել Աշոտ Սերոբի Սադյանին:

3. Առաջարկել ակադեմիայի նախագահի պաշտոնակատարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ակադեմիայի կանոնադրության պետական գրանցումը.

2) բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում պետական կառավարման լիազոր մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին) հաստատմանը ներկայացնել ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգը.

3) ակադեմիայի անդամների ընտրության արդյունքները հաստատելուց հետո հինգ օրվա ընթացքում ապահովել ընտրված անդամների մասին տեղեկատվության հրապարակումը և նրանց ընդգրկումն ակադեմիայի անդամների պաշտոնական ցուցակում:

4. Սահմանել, որ ակադեմիայի նախագահությունը իր գործունեությունը շարունակում է մինչև ակադեմիայի նոր նախագահության ձևավորումը:

5. Սահմանել, որ՝

1) «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ, 44-րդ հոդվածի 8-րդ մասերի հիման վրա սույն որոշման հավելվածի 2-րդ, 32-րդ, 75-րդ, 84-րդ, 135-137-րդ կետերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների պատվավոր գլխավոր և պատվավոր առաջատար գիտաշխատողների վերաբերյալ դրույթներն ու-

ժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

2) մինչև ակադեմիայի նոր նախագահության ձևավորումը, ակադեմիայի կանոնադրության պետական գրանցումից հետո երկամսյա ժամկետում կազմակերպվում է ակադեմիայի նոր ասոցացված, արտասահմանյան և պատվավոր անդամների ընտրություն՝ ակադեմիայի նախագահի պաշտոնակատարի ներկայացմամբ և բարձրագույն կրթության և գիտության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից հաստատված՝ ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգին համապատասխան.

3) ակադեմիայի նախագահությունը ձևավորվում է ակադեմիայի նոր անդամների ընտրությունից հետո՝ ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով, ակադեմիայի անդամների ընտրությանը հաջորդող մեկամսյա ժամկետում.


4) ակադեմիայի նախագահությունը կազմակերպում է ակադեմիայի նախագահի ընտրությունը, ակադեմիայի նախագահի ներկայացմամբ հաստատում է ակադեմիայի կառուցվածքը, հաստատում է ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կազմը՝ ակադեմիային վերապահված գործառնությունների իրականացումն ապահովելու նպատակով:

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ ակադեմիայի կանոնադրության պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել ակադեմիայի նախագահության անվանական կազմը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Aruch. Rediscovering a Medieval Armenian Capital. Archaeological Campaigns 2022-2025» գրքի շնորհանդեսը



AICS գործակալության Արուճի նախագծի պատասխանատու Սերջիո Ֆերդինանդին:

Գրքում ներկայացված են Արուճի ամրոցում հայ-իտալական արշավախմբի կողմից իրականացված հնագիտական պեղումների արդյունքները, ինչի շնորհիվ հնավայրը վերագնահատվում է որպես միջնադարյան Հայաստանի քաղաքական, մշակութային և տնտեսական նշանակալի կենտրոն:

Արուճի հուշարձանախումբը գտնվում է Արագածոտնի մարզի Արուճ բնակավայրում: Աշխատության մեջ նշվում է, որ սկսած 7-րդ դարից՝ Արուճը, համատեղելով կրոնական ու աշխարհիկ իշխանությունը և ունենալով զարգացած ամրաշինական և ենթակառուցվածքային համակարգ, ոչ միայն բնակավայր կամ ճանապարհային կանգառ էր, այլև միջնադարյան կյանքի բազմաֆունկցիոնալ և աշխույժ կենտրոն:

Գրքի շնորհանդեսին մասնակցեցին դիվանագիտական, գիտակրթական կառույցների ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Պավել

Ավետիսյանը՝ ընդգծելով, որ աշխատությունը մեծ նշանակություն ունի ժամանակակից հնագիտության զարգացման տեսանկյունից: «Աշխատությունը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից: Եթե առաջին մասում ներկայացված են հնագիտական հետազոտությունների արդյունքները, ապա երկրորդ մասում անդրադարձ է կատարվում հուշարձանի պահպանության, վերականգնման և զբոսաշրջային ներուժի հետ կապված հարցերին: Սա նոր մոտեցում է, երբ մեկ հրատարակության շրջանակում փոխկապակցվում են այս հարցերը: Այդ առումով աշխատությունը գիտամեթոդական կարևոր նորություն է հնագիտության ոլորտում», - ասաց Պավել Ավետիսյանը:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Արսեն Բոբոխյանը նշեց, որ աշխատությունը միջազգային գործընկերների հետ տարիների համատեղ գիտական աշխատանքի և արդյունավետ համագործակցության արդյունք է. «Սա մի փայլուն



հրատարակություն է, որին մենք երկար ենք սպասել»:

Ողջունելով մասնակիցներին՝ ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտինի կարևորեց հայ-իտալական համագործակցությունը: «Արուճը Հայաստանի ժառանգությունն է և միաժամանակ համաձայնակային ժառանգություն է: Մեր հավակնությունն է, որ Արուճը վերածվի հայ-իտալական հարաբերությունների փայլուն օրինակի: Այս գեղեցիկ վայրը պետք է դարձնել մաս գրավիչ, որը թույլ կտա ունենալ տնտեսական հնարավորություններ և գրավել զբոսաշրջային մեծ հոսքեր: Սրան հասնելու հա-

մար պետք է բոլորս միասին աշխատենք՝ հստակ ունենալով մեր նպատակները և կիսվելով մեր ջանքերով և աշխատանքով», - ասաց Ալեսսանդրո Ֆերրանտինի:

Միջոցառման մասնակիցներին ողջունի խոսք հղեց Իտալիայի Միջերկրածովյան և արևելյան հետազոտությունների ասոցիացիայի (ISMEO) նախագահ Ադրիանո Վալերիո Ռոսսին: Նա ներկայացրեց ISMEO-ի և Հայաստանի համագործակցության արդյունքները և կարևորեց դրա շարունակականությունը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«ԳԱԱ դրամաշնորհ Հայկական համադպրոցական գիտության փառապոնի հաղթողին՝ London International Young Scientist Forum-ին մասնակցելու համար

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) հունիսի 9-ին հյուրընկալեց Հայկական համադպրոցական գիտության փառապոնի՝ 2026 թվականի հաղթողներին: Նրանց շնորհավորեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Հարություն Սարգսյանը, Հայկական համադպրոցական գիտության փառապոնի Ժյուրիի անդամներ:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ ԳԱԱ-ում արդեն երկրորդ անգամ անցկացված Հայկական համադպրոցական գիտության փառապոնը մեծ հետաքրքրություն և ակտիվություն է առաջացնում: «Սա հաճելի և կարևոր նախաձեռնություն է մեզ համար: Մենք՝ բոլորս, մեծ հաճույք ու հպարտություն ենք զգացել մեր մասնակիցների աշխատանքներին ծանոթանալիս: Հատկապես»



կան է, որ աշակերտները համարձակորեն պաշտպանում էին իրենց աշխատանքները՝ ցույց տալով, որ լիարժեք տիրապետում են ընտրած թեմաներին, պատրաստ են հիմնավորելու իրենց տեսակետները: Սա շատ կարևոր ձեռքբերում է և վկայում է նոր սերնդի գիտական մտածողության, ինքնավստահության և ստեղծագործ ներուժի մասին: Փառապոնի ողջ ընթացքը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ Հայաստանում ձևավորվում է գիտությամբ հետաքրքրված, նախաձեռնող և նպատակալից երիտասարդների նոր սերունդ»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Շնորհավորելով աշակերտներին՝ Ժաննա Անդրեասյանը վստահեցրեց, որ պետությունը շարունակելու է աջակցել երիտասարդ գիտնականներին՝ գիտությամբ զբաղվելու դարձնելով գրավիչ ու հեռանկարային մասնագիտական ընտրություն: «Եթե դպրոցական տարիներին այս հաջողություններից ոգևորված որոշեք շարունակել ձեր ճանապարհը գիտության մեջ, ապա վստահ եղեք, որ Հայաստանը դառնում է գիտությամբ զբաղվելու լավագույն երկրներից մեկը»,- ասաց Ժաննա Անդրեասյանը: Նա նշեց, որ Հայկական համադպրոցական գիտության փառապոնը հնարավորություն է՝ միջազգային գիտակրթական միջավայր մուտք գործելու: «Գիտությունը միջազգային երևույթ է: Մենք չենք կարող Հայաստանում ունենալ բարձրորակ գիտություն, եթե այն սերտորեն կապված չէ միջազգային գիտական ցանցերի հետ: Աշխատանքի որակի գնահատման հստակ չափանիշներ ունենալու



համար անպայման պետք է մասնակցենք հնարավոր բոլոր միջազգային մրցույթներին՝ տեսանելի դարձնելով մեր աշխատանքը, միջազգային գնահատումների միջոցով բարելավելով ու զարգացնելով մեր երկրում իրականացվող կրթագիտական ծրագրերը»,- ասաց նախարարը և շնորհակալություն հայտնեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային՝ գիտության հանրայնացման, դպրոցականների շրջանում գիտությամբ զբաղվելու մշակույթի ձևավորման և Համադպրոցական գիտության փառապոնի կազմակերպման համար:

Հայկական համադպրոցական գիտության փառապոնի երկու մրցանակակիր նախագծեր ներկայացվել են աշակերտական գիտական նախագծերի ամենահեղինակավոր մրցույթներից մեկին՝ մայիսի 9-15-ին ԱՄՆ-ի Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքում կայացած «Regeneron» ISEF 2026 միջազգային գիտական և ճարտարագիտական տոնավաճառին:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի սովորող Ալբերտ Շահինյանի՝ «Ֆիզիկա և աստղագիտություն» ամվանակարգում ներկայացրած «Forced condensation of atmospheric water vapor using multilayer graphene-coated porous ceramic substrates» նախագիծն արժանացել է 3-րդ կարգի մրցանակի: Նախագիծն ուսումնասիրվել է բազմաշերտ գրաֆենի միջոցով մթնոլորտային ջրի հավաքման արդյունավետությունը բարձրացնելու եղանակները:

Մրցույթին մասնակցել են նաև «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 12-րդ դասարանի սաներ Սոֆյա Մելրամյանը և Մարիա Մելիքյանը և 11-րդ դասարանի սան Ալյոնա Հակոբյանը՝ «Շրջակա միջավայրի ճարտարագիտություն» ամվանակարգում ներկայացնելով «Sorbroot» նախագիծը, որն ուսումնասիրում է ջրի մաքրման գործում պլաստիկ թափոնների կիրառության հնարավորությունները:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան Ալբերտ Շահինյանին տրամադրում է դրամաշնորհ՝ «London International Young Scientist Forum»-ին (LIYSF-2026) մասնակցության համար, որը տեղի կունենա հուլիսի 19-ից օգոստոսի 1-ը: Այս հեղինակավոր ֆորումը գործում է Նորից Թագավորական Մեծություն Արքայադուստր Աննայի հովանավորության ներքո:

Դիմելով Ալբերտ Շահինյանին՝ ՀՀ ԳԱԱ նախագահն ասաց. «Սա հնարավորություն է այցելելու աշխարհի առաջատար գիտակրթական կենտրոններ՝ Օքսֆորդի, Քեմբրիջի համալսարան, Լոնդոնի Կայսերական քոլեջ և այլ հեղինակավոր գիտական հաստատություններ, լաբորատորիաներ և հետազոտական կենտրոններ,

ծանոթանալու ժամանակակից գիտության ձեռքբերումներին, անմիջականորեն հաղորդակցվելու առաջատար գիտնականների, հետազոտողների հետ, ձևավորելու միջազգային գիտական կապեր, ինչպես նաև ձեռք բերելու արժեքավոր փորձ, որը կարող է կարևոր դեր ունենալ հետագա մասնագիտական զարգացման ճանապարհին»:

Խոսելով միջազգային մրցույթին իր մասնակցության մասին՝ Ալբերտ Շահինյանը նշեց. «Միջոցառումը բարձր մակարդակով էր կազմակերպված: Այն ոչ միայն գիտական մրցույթ էր, այլև յուրահատուկ միջավայր, որտեղ հավաքվել էին տարբեր ոլորտների լավագույն ներկայացուցիչները: Մասնակիցները լիովին ընկղմված էին գիտական աշխարհի մեջ, իսկ ներկայացված նախագծերը բարձր մակարդակի էին: Ակնհայտ էր, որ աշակերտների պատրաստվածության և նախագծերի մշակման վրա տարիների աշխատանք ու



Գալի ռեսուրսներ էին ներդրվել: Սա արժեքավոր և ոգեշնչող փորձ էր»:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ սեպտեմբերի 22-27-ին Գերմանիայի Քիլ քաղաքում կանցկացվի 37-րդ «The European Union Contest for Young Scientists» (EUCYS-2027) միջազգային մրցույթը, որին Հայաստանից այս տարի կներկայացվի 2 նախագիծ: «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 12-րդ դասարանի աշակերտներ Հայկ Ղազարյանը և Հովհաննես Մամուկյանը կներկայացնեն «Էյրիֆայ» նախագիծը: Վանաձորի Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներ Գարիկ Փանիկյանը և Նարեկ Պապոյանը կներկայացնեն «Խելացի բիոպլաստիկ» նախագիծը:

Հանդիպման ընթացքում աշակերտները ներկայացրին իրենց առաջարկները: Նրանք նշեցին, որ կարևոր է դպրոցականների համար պարբերաբար այցելել առաջատար գիտական կենտրոններ, տեղում ծանոթանալ ժամանակակից հետազոտական սարքավորումներին, գիտական ենթակառուցվածքներին և առաջատար գիտնականների գործունեությանը: Նրանց կարծիքով մասն աջցրել ոչ միայն կընդլայնեն աշակերտների պատկերացումները գիտության մասին, այլև կոգեշնչեն նրանց, կխթանեն հետաքրքրությունը գիտության նկատմամբ և կաջակցեն մասնագիտական կողմնորոշմանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«ԳԱԱ-ում կայացավ Հայ օգնության ֆոնդի կողմից դրամաշնորհների հանձնման արարողությունը



Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հովանու ներքո գործող երվանդ Թերոյանի անվան Գիտության և կրթության հայկական ազ-

գային հիմնադրամի (ԳԿՀԱՀ-ANSEF) դրամաշնորհների հանձնման արարողությունը: Այս տարի դրամաշնորհ ստացավ 10 գիտական խումբ: Յուրաքանչյուր դրամաշնորհի գումարը 7.500

դոլարին համարժեք դրամ է: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Ռուբեն Հարությունյանը, ՀՕՖ-ի փոխտնօրեն, ԳԿՀԱՀ-ի կրթական ծրագրերի ղեկավար Էդուարդ Կարապետյանը, ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Բագրատ Սարգսյանը, գիտաշխատողներ ՀՀ տարբեր գիտական կառույցներից:

Շնորհավորելով շահառու գիտական խմբերի մասնակիցներին՝ Ռուբեն Հարությունյանը նշեց, որ ՀՀ ԳԱԱ-ն, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի համաձայն, իրականացնելու է Հայաստանում գիտական փորձաքննական գործունեություն՝ որպես գլխավոր փորձագիտական կառույց: Այս համատեքստում նա կարևորեց ՀՕՖ-ի հետ համագործակցությունը՝ նշելով, որ նոր կարգավիճակով այն կարող է առավել ընդլայնվել:

ԳԿՀԱՀ-ի կրթական ծրագրերի ղեկավար Էդուարդ Կարապետյանը նշեց, որ տարեցտարի աճում է դրամաշնորհային մրցույթներին դիմողների քանակը, իսկ 2026 թվականն աննախադեպ է: 166 հայտերից ընտրվել է 10-ը:

ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Բագրատ Սարգսյանը նշեց, որ իրական զարգացում ունենում են հենց այն երկրները, որոնք ճիշտ ներդրում են անում գիտության մեջ:

Նշվեց, որ անցած 26 տարիների ընթացքում ԳԿՀԱՀ-ի հետազոտական խորհրդին ներկայացվել է 3732 դիմում-առաջարկ, որոնցից դրամաշնորհ է ստացել 632 գիտական խումբ: Ծրագրի դրամաշնորհային ընդհանուր գումարը կազմել է 3 միլիոն 267,500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Նշանավոր պետական գործիչը և գիտնականը

(Ակադեմիկոս Անդրանիկ Պետրոսյանցի 120-ամյակի առթիվ)



Հայ ժողովրդի բազմաթիվ արժանավոր գավազներ հորհրդային Միությունում տարբեր ժամանակաշրջաններում զբաղեցրել են պետական բարձր պաշտոններ, որոնց թվում արժանահիշատակ է Անդրանիկ Պետրոսյանցը, ով եղել է ԽՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահը և երկար տարիներ ղեկավարել հզոր գերտերության ռազմաստրատեգիական նշանակության այդ կարևորագույն համակարգը:

Անդրանիկ Մելքոնի Պետրոսյանցը ծնվել է 1906 թ. մայիսի 8-ին Ռուսաստանի Վլադիկավկազ քաղաքում: 1933 թ. ավարտել է Ուրալի մեխանիկամեքենաշինական ինստիտուտը (Սվերդլովսկ): 1933-1939 թթ. աշխատել է Սվերդլովսկի Օրջոնիկիձեի անվան ծանր մեքենաշինության գործարանում: 1939 թ. եղել է ծանր մեքենաշինության ժողկոմատի կոլեգիայի անդամ, 1940 թ.՝ ժողկոմի տեղակալ: 1941 թ. հունվարին նշանակվել է հաստոցաշինական և գործիքաշինական արդյունաբերության ժողկոմի առաջին տեղակալ, իսկ Հայրենական մեծ պատերազմը սկսվելուց հետո՝ տանկային արդյունաբերության ժողկոմի տեղակալ:

1943 թ.-ից Ա. Պետրոսյանցը աշխատել է ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեում: 1945 թ. նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում: 1947 թ. նշանակվել է ԽՍՀՄ ժողկոմխորհին առընթեր գլխավոր վարչության պետի տեղակալ, իսկ 1955 թ.՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության մինիստրի տեղակալ: 1962-

1986 թթ. Անդրանիկ Պետրոսյանցը ԽՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահն էր:

Ջուզահեռաբար զբաղվել է գիտական աշխատանքներով: 1955 թ. նրան շնորհվել է ֆիզմաթ գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1957 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1977 թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ իսկական անդամ: Ա. Պետրոսյանցի գիտական աշխատանքները վերաբերում են ԱԷԿ-ի ջերմաէներգետիկական սարքավորումների օպտիմալացման, խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման, ատոմային էլեկտրակայանների շրջակայքում ճառագայթային իրադրության ուսումնասիրության հարցերին: Ատոմային տեխնիկայի և գիտության ժամանակակից հիմնախնդիրներին նվիրված նրա գրքերից մի քանիսը թարգմանվել և հրատարակվել են արտասահմանյան երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Ճապոնիա, Անգլիա):

Գիտակազմակերպչական հսկայա-

ծավալ գործունեության համար Ա. Պետրոսյանցին 1951 թ. շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ, իսկ 1962 թ.՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Պարգևատրվել է Լենինի 6, Դոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի, Կուտուզովի առաջին աստիճանի, Կարմիր աստղի 2, «Պատվո ճշմարտ» շքանշաններով: Ընտրվել է Գրեյնոբլի համալսարանի (Ֆրանսիա) պատվավոր դոկտոր (1947 թ.) և Շվեդիայի ինժեներական գիտությունների թագավորական ակադեմիայի անդամ (1977 թ.):

Նշանավոր պետական գործիչ և անվանի գիտնական Անդրանիկ Պետրոսյանցը վախճանվել է 99 տարեկան հասակում՝ 2005 թ. և հուղարկվել է Մոսկվայի Վազանկովյան գերեզմանատանը: 2020 թ. Մոսկվայի Պոլարսկայա փողոցի N 31 շենքի պատին փակցվել է հուշատախտակ՝ «В честь отца - основателя атомной промышленности Андраника Петросянца» մակագրությամբ:

Խմբագրություն



Միջազգային գիտաժողով՝ նվիրված ճառագայթման և մասնիկների փոխազդեցության ոլորտի նվաճումներին ու դրանց կիրառություններին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում հունիսի 22-ին մեկնարկեցին «Փնջեր և ճառագայթում, փոխազդեցություն և կիրառություններ» թեմայով 10-րդ միջազգային գիտաժողովը և ակադեմիկոս Ալլաիկ Մկրտչյանի անվան «Ճառագայթային ֆիզիկա և հարակից կիրառություններ» 5-րդ միջազգային գիտական դպրոցը:

Միջազգային գիտաժողովը և գիտական դպրոցը կազմակերպել էր Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ: Նպատակն էր խթանել Հայաստանում առաջատար գիտական ուղղությունների զարգացումը և միջազգային համագործակցության նոր հնարավորությունների ձևավորումը:

Մեկ հարկի տակ էին համախմբվել հայտնի գիտնականներ, հետազոտողներ և ուսանողներ Իտալիայից, Իրանից, Հայաստանից, Հունաստանից, Մալդիվայից, Միացյալ Թագավորությունից, Չինաստանից, Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից՝ քննարկելու ճառագայթման և մասնիկների փոխազդեցության ոլորտում գիտական նվաճումներն ու դրանց կիրառությունները:

Ողջունելով մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, թղթակից անդամ Արամ Պապոյանը նշեց. «Ներկայում Հայաստանը գիտության և բարձրագույն կրթության ոլորտներում իրականացնում է խորքային և լայնածավալ բարեփոխումներ: Մեր նոր ռազմավարության առաջնահերթություններից է միջազգային համագործակցության ամրապնդումը: Գիտությունն իր եռթիվով միջազգային է, վեր է քաղաքականությունից և սահմաններից և մարդկության զարգացման կարևոր շարժիչ ուժերից մեկն է: Ռազմավարության կարևոր ուղղություններից է երիտասարդ հետազոտողների ակտիվ ներգրավումը: Միջազգային գիտական դպրոցը կնպաստի երիտասարդ գիտնականների ակտիվացմանը և նրանց ներգրավմանը միջազգային լայն համագործակցություններում: Վստահ եմ, որ այս միջոցառումները կխորացնեն գիտական կապերը և կհանգեցնեն նոր համագործակցությունների»:

«Այս տարի առաջին անգամ դպրոցն

ու գիտաժողովը դարձան մեկ ընտանիք: Գիտական դպրոցի պատմությունը սկսվել է 2002 թվականին Սևանա լճի ափին, իսկ գիտաժողովը՝ 2009 թվականին: Աշխարհի տարբեր երկրներից գիտնականներ են հավաքվում Հայաստանում՝ ներկայացնելու իրենց բացահայտումները ֆիզիկայի ոլորտում: Մեր նախորդ դասախոսություններից և զեկույցներից շատերը հրատարակվել են միջազգային գիտական ամսագրերում: Վստահ եմ, որ այս աշխատանքներն էլ կնպաստեն գիտության զարգացմանը»,- իր ելույթում ասաց Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վահան Քոչարյանը:

Իտալիայի միջուկային հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Սուլթան Դաբազովն իր ելույթում նշեց. «Հատկապես հաճելի է կրկին լինել Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում: Այս շենքը դարձել է մեր հանդիպումների ավանդական վայրերից մեկը: Ուստի, առաջին հերթին, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիային՝ մեր քննարկումներին աջակցելու համար: Գիտական այս միջոցառումները հնարավորություն են աշխարհի առաջատար մասնագետների հետ քննարկելու ոլորտի հիմնական և հրատապ խնդիրները և մարտահրավերները, որոնք պետք է լուծվեն ապագայում: Հուսով եմ, որ հենց այս շաբաթվա ընթացքում կայանալիք քննարկումներից կծնվեն նոր լուծումներ և նոր գաղափարներ»:

Միջազգային գիտաժողովը և գիտական դպրոցը շարունակվեցին հունիսի 23-24-ին Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում, իսկ 25-28-ին՝ Ջերմուկում: Քննարկվեցին տարբեր միջավայրերի հետ ճառագայթային փնջերի և մասնիկների փոխազդեցությունը, իոնացնող ճառագայթման ազդեցությունը ու դրանց կիրառությունները, ճառագայթային տեխնոլոգիաները հնագիտության, բժշկական ֆիզիկայի, բնապահպանության և աստղագիտության մեջ, ինչպես նաև ֆունկցիոնալ նյութերն ու բյուրեղների աճը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«Երիտասարդ գիտական խմբերի ձևավորման և հետազոտական գործունեության խթանման մրցույթ»

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը (ԵԳԱԾ) հայտարարում է «Երիտասարդ գիտական խմբերի ձևավորման և հետազոտական գործունեության խթանման մրցույթ»:

Մրցույթի նպատակներն են երիտասարդ գիտնականներից բաղկացած նոր գիտական խմբերի ձևավորումը, երիտասարդ գիտնականների շրջանում գիտական ծրագրերի իրականացման և ղեկավարման հմտությունների զարգացումը, գիտահետազոտական ծրագրերում երիտասարդների ներգրավվածության ավելացումը, մասնագիտական որակավորման բարձրացումը:

Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով: Մրցույթի շրջանակում նախագծի առավելագույն ֆինանսավորման չափը 2 անձից բաղկացած խմբի դեպքում կազմում է 3.5 միլիոն դրամ, իսկ 3 անձից բաղկացած խմբի դեպքում՝ 5 միլիոն դրամ: Խմբերում կարող են ընդգրկվել տարբեր մասնագիտությունների ուսանողներ, ասպիրանտներ, գիտաշխատողներ և այլ հաստիքներ



զբաղեցնող երիտասարդներ: Խմբի անդամները և ղեկավարը նախագծի իրականացման ընթացքում պետք է հանդիսանան ՀՀ բաղաբաղիներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև նախագծի իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

Մրցույթի շրջանակներում առաջնահերթություն է տրվելու գիտության և տեխնոլոգիաների ոլորտների զարգացման՝ 2026-2030 թվականների գերակա ուղղություններին առնչվող նախագծերին:

Նախագծի իրականացման տևողությունը 12 ամիս է:

Մրցույթին դիմելու վերջնաժամկետը 2026 թվականի հունիսի 10-ն է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Շրջակա միջավայրի համաշխարհային օրը Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում



Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում հունիսի 5-ին նշվեց Շրջակա միջավայրի համաշխարհային օրը: Հանրապետության տարբեր դպրոցների աշակերտներ մասնակցեցին «Արմատից մինչև ծաղկուն» խորագրով ուսուցողական և ճանաչողական միջոցառումներին:

Բուսաբանական այգու Թերապևտիկ այգում, որը ստեղծված է որպես ներառական և հանգստացնող միջավայր, երեխաները տնկեցին բույսեր, եղան արևադարձային բույսերի ջերմատանը, շրջեցին ինստիտուտի լաբորատորիաներում: Դպրոցականները գիտաշխատողների հետ միասին բացահայտեցին բույսերի հետաքրքիր աշխարհը, առանձնա-

հատկությունները և դրանց դերը շրջակա միջավայրի պահպանման գործում:

Միջոցառումը կազմակերպվեց «Հետազոտողները դպրոցներում» ծրագրի շրջանակում, որը «ERNA - European Researchers' Night in Armenia» նախագծի բաղադրիչ է: «Հետազոտողները դպրոցներում» ծրագիրն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում դպրոց-գիտնական կապի ամրապնդմանը, դպրոցականների շրջանում գիտության հանդեպ հետաքրքրության բարձրացմանը, գիտահետազոտական աշխատանքների համարմատելիացմանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Բարեխիղճ, շիպակ պատմաբանն ու մանկավարժը

(Լիլիթ Չաքարյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

աշխատանքի է անցել 33 ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնում՝ իր հետագա գիտական գործունեությունն անշեղորեն կապելով ինստիտուտի հետ: Նա ինստիտուտում սկզբում աշխատել է իբրև ավագ լաբորանտ, այնուհետև նշանակվել է կրտսեր, ապա ավագ գիտաշխատողի պաշտոններում:

Գիտահետազոտական գործունեությանը զուգահեռ L. Չաքարյանը զբաղվել է նաև դասախոսական և վարչակազմակերպչական աշխատանքով: 1997-2015 թթ. աշխատել է Երևանի Յուսիսային համալսարանում, որտեղ 2001-2008 թթ. դեկավարել է Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնը, 2009-2011 թթ. զբաղեցրել է ուսումնական վարչության պետի, իսկ 2011-2015 թթ.՝ որակի ապահովման վարչության պետի պաշտոնները: 2002-2004 թթ. նա դասավանդել է Հայկական պետական մանկավարժական համալսարանում, 2007-2009 թթ.՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում: 2016-2020 թթ. աշխատել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում՝ իբրև քաղաքականության մշակման և իրականացման ավագ մասնագետ, իսկ 2021-2024 թթ.՝ Հայաստանի ազգային ազդարային համալսարանի Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն:

L. Չաքարյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է Հայաստանի նորագույն պատմության բազմաբնույթ խնդիրները: Նրա «Խորհրդրդահայ գյուղի մայրամուտը» (2007) մենագրությունը, որն իր թեկնածուական ատենախոսության լրամշակված տարբերակն է, նվիրված է խորհրդահայ գյուղի վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական պատմությանը: Աշխատանքում

վերլուծվում են 1980-ական թվականների՝ ԽՍՀՄ-ում խորացող ճգնաժամային գործընթացների հայաստանյան դրսևորումները, գյուղատնտեսության հիմնախնդիրները և խորհրդային իշխանությունների կողմից պարենային ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

«Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում» (2018) մենագրությունում L. Չաքարյանը ներկայացրել է անկախ Հայաստանի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման ու զարգացման հիմնական փուլերը՝ բացահայտելով այդ համակարգերի կայացման առանձնահատկությունները:

Նրա ուսումնասիրությունների կարևոր ուղղություններից են նաև գեոդեռային հիմնահարցերը: Անահիտ Հարությունյանի համահեղինակությամբ հրատարակված «Գեոդեռ և լրագրություն» (2010) ուսումնական ձեռնարկում քննարկվում են լրագրության մեջ գեոդեռային բաղադրիչի տեսական հիմքերը, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների դերը գեոդեռային կարծրատիպերի հաղթահարման և հասարակական կարծիքի ձևավորման գործընթացում:

Ներկայումս L. Չաքարյանը զբաղվում է Հայաստանի Հանրապետության առաջին գունդում գերագույն խորհրդի (1990-1995 թթ.) ձևավորման և գործունեության պատմության ուսումնասիրությամբ՝ պատրաստելով մենագրություն: Այդ թեմային նվիրված նրա մի շարք գիտական հոդվածներն արդեն իսկ կարևոր ներդրում են Հայաստանի Հանրապետության անկախ պետականության սկզբնական շրջանի քաղաքական պատմության ուսումնասիրման

գործում: Բացի այդ, նա առանձին ուսումնասիրություններ է տպագրել այն մասին՝ ի պատմության, կրթական համակարգի խնդիրների, գարեջրի արտադրության պատմության առանձին հարցերի վերաբերյալ:

Նա գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների: Գիտական և մանկավարժական գործունեության համար արժանացել է մի շարք պարգևների և շնորհակալագրերի՝ ՀՀ ԳԱԱ գովեստագիր, Յուսիսային համալսարանի շնորհակալագրեր և պատվոգրեր, ՀՀ Ազգային ժողովի պատվոգիր՝ կրթության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար (2017 թվական) և այլն:

L. Չաքարյանի գիտական գործունեությունն առանձնանում է թեմատիկ լայն ընդգրկմամբ և արդիական խնդիրների արծարծմամբ: Նա ժամանակակից հայկական պատմագիտության այն ներկայացուցիչներից է, ով ոչ միայն փորձառու և բարեխիղճ հետազոտող է, այլև սրտացավ և նվիրված ընկեր, ուղղակի պարզ ու բարի մարդ, որի ընկերակցությունը վայելելը մեծագույն հաճույք է իրեն շրջապատողների համար: Վստահ ենք, որ Լիլիթ Չաքարյանի հետագա գործունեության արդյունքում հայկական պատմագիտությունը կհարստանա նոր և արժեքավոր ուսումնասիրություններով: Մաղթում ենք նրան ստեղծագործական անսպառ եռանդ, գիտական նորանոր ձեռքբերումներ, քաջառողջություն և անձնական երջանկություն:

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Վաթսուհուհուհու բոլորեց հայկական ժամանակակից պատմագիտության ուրույն ներկայացուցիչներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Սաշայի Չաքարյանը:

Ծնվել է 1966 թ. հունիսի 16-ին Երևան քաղաքում: 1973-1983 թթ. սովորել է Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետը, որն ավարտել է 1988 թ.՝ ստանալով պատմության, հասարակագիտության և սովետական իրավունքի ուսուցչի որակավորում: 1988 թ. օգոստոսից մինչև 1989 թ. հունվար աշխատել է Սևան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և հասարակագիտության ուսուցչուհի: 1989 թ. հունվարից մինչև 1992 թ. հունվար սովորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1993 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանի գյուղում 1980-ական թվականներին» թեմայով, իսկ 2008 թ. արժանացել է դոցենտի գիտական կոչման:

1992 թ. փետրվարից L. Չաքարյանն

Ադրբեջանի «նոր» հայրնագործությունը 37 տարվա պատմությունում. Օձասարի ուրարական արձանագրության ողիսականը



Ադրբեջանի հնագետներն օրերս հայտարարեցին իրենց «բացառիկ հայտնագործության» մասին: Ըստ նրանց՝ Նախիջևանի ինքնավար Հանրապետության տարածքում՝ Օձասար (Իլանդադ) կոչվող ժայռի վրա, իբր գտել են 2800-ամյա հնության ուրարական արձանագրություն, որը, տեղադրության նշան բացակայության պատճառով, ավելի քան 4 տասնամյակ անհայտ էր:

Թարմացմանը ադրբեջանի հնագետների հիշողությունը:

Ուրարական սեպագիր արձանագրությունը հայտնաբերվել է դեռևս 1988 թվականին երկրաբան-հնագետ Վալերի Իգումնովի կողմից:

1997 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» 1-ին համարում տպագրված «Օձասարի սեպագիր արձանագրությունը» վերտառությամբ հոդվածում (հեղինակությամբ՝ Վ. Իգումնովի, Հ. Կարագյոզյանի, Ս. Հմայակյանի) ամենայն մանրամասնությամբ ներկայացված են հայտնաբերված արձանագրությունը, դրա տեղակայումը, թարգմանությունն ու բովանդակությունը, արձանագրության մեկնությունները: Նշված է, որ արձանագրությունը «փորագրվել է մ.թ.ա. 9-րդ դ. վերջին քառորդին՝ 820-ական թթ.: Այն կազմված է Իշպուհիի անունից, փորագրված է, սակայն, Մինուայի հրամանով»: 1988 թ. հայտնաբերված այս արձա-

նագրությունը Վ. Իգումնովը երկրորդ անգամ լուսանկարել, նկարագրել ու չափագրել է 1989 թ.:

Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և մարդաբանության ինստիտուտը հայտարարում է, որ արձանագրությունը կարևոր աղբյուր է տարածաշրջանի հնագույն պատմության ուսումնասիրության համար՝ այն ներկայացնելով որպես Ադրբեջանի պատմական ժառանգության մաս:

Արձանագրության շուրջ ձևավորված մեկնաբանություններն Ադրբեջանի պաշտոնական քարոզչության շրջանակներում են, որոնք տարածաշրջանի հայկական բազմաթիվ հուշարձաններ ներկայացնում են որպես «ադրբեջանական» ժառանգություն:

«Խալդի աստծո պաշտպանությամբ, Սարդուրիի որդի Իշպուհին, (և) Իշպուհիի որդի Մեմուան նվաճեցին Արսիսի քաղաքը: Նրանք (բառացի՝ նա) պարտության մատնեցին Արսիսի քաղաքի երկիրը, նվաճեցին Անիանի քաղաքի երկիրը և ավերեցին այն: Դա (?) [...] էր: Նա կանգնեցրեց կոթող Խալդի աստծո համար: Պուլուադի երկրում նա հաստատեց մի ծես. նա (ծիսակատարը) կարող էր գոհաբերել [եզ] Խալդի աստծուն և մեկ կով՝ Պուլուադի երկրի՝ Խալդի աստծո կնոջը»:


Այս արձանագրությունը վերաբերում է ուրարական ժամանակաշրջանի ռազմական և կրոնական քաղաքականությանը: Տեքստում հիշատակվում են Իշպուհի-

նի և Մեմուա թագավորները (մ.թ.ա. 9-8-րդ դդ.): Վերջիններս հայտնի են որպես Ուրարտուն հզորացնողներ՝ ամրոցներ կառուցելով, տարածքներ նվաճելով և Խալդի աստծո պաշտամունքը պետական կրոն դարձնելով:

Արսիսի և Անիանի քաղաքների նվաճումը ցույց է տալիս Ուրարտուի տարածքային ընդլայնման քաղաքականությունը: «Նվաճեցին» և «ավերեցին» բառերն ընդգծում են ուրարտացիների ռազմական հաղթանակը՝ որպես ուժի ցուցադրում: Հաղթանակից հետո Խալդի աստծո համար կոթող կանգնեցնելը բնորոշ է ուրարտական ավանդույթին՝ ռազմական հաջողությունները կապել աստվածային հովանավորության հետ: Խալդին Ուրարտուի գերագույն և ռազմի աստված էր, և նրա պաշտամունքն ամրապնդում էր թագավորի լեգիտիմությունը, իսկ նվաճված տարածքներում սահմանված հատուկ ծեսով՝ զոհաբերություն Խալդիին և նրա «կնոջը», անմիջապես հաստատվում է ուրարտական կրոնական համակարգը՝ որպես քաղաքական վերահսկողության միջոց:

Նախիջևանի Ջուլայի (Ջուլֆա) շրջանում՝ հայկական Խոշակունիք բնակավայրի մոտ գտնվող Օձասար լեռան արևմտյան մասում, 100 սմ երկարությամբ, 5 տողից բաղկացած, ժամանակի ընթացքում հողմահարված արձանագրությունն օրերս դարձավ ադրբեջանական քաղաքական քարոզչության գործիք, և ժամանակակից ազգային ինքնությունների հետ դա արհեստականորեն կապելը սովորում է արձանագրության պատմագիտական իրական արժեքն ու նշանակությունը:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ, 2026.06.06




Վ. Իգումնովի կողմից արված լուսանկարը, 1989 թ.

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Ա. Սարգսյան - Ղարաբաղի բարբառի բառարան (Երրորդ լրամշակված հրատարակություն):
2. Ա. Մոկացյան - Ընթացակարգերի տեսության տարրեր: Թյուրիմզյան աստիճաններ: Թվաբանական աստիճանակարգ (ուսումնական ձեռնարկ):
3. Վ. Կարախանյան - Կոմբինատոր անալիզ (ուսումնական ձեռնարկ):
4. «Русское управление в Карском пашалыке в 1856 году (Из походных воспоминаний Помандруйко)». Публикация текста, предисловие и примечания А. Мурадяна, И. Дубинина.
5. A. Yesayan - Tavuch District from the Early 17th Century to the First Quarter of the 18th Century.
6. Հեղ. խումբ - «Le vin au croisement du culturel, de l'économique et du symbolique: regards interdisciplinaires» (գիտական հոդվածների ժողովածու):
7. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Տեղեկագիրք-2025»:
8. «Բանբեր հայագիտության», 2026թ., N 1:
9. «Գրականագիտական հանդես», 2026 թ., N 1:

Մթափության կոչ՝ դարերի խորքից



Թովմաս Վանանդեցին իրականացրել է «Չայոց պատմություն» հայերեն առաջին տպագրությունը, իսկ օտար լեզվով (լատիներեն) այն տպագրվել է 1736 թ. Լոնդոնում՝ անգլիացի հայագետներ Վիստոն Եղբայրների կողմից:

Խորենացու ամենաի երկը հետագայում ունեցել է բազում հրատարակություններ, դրա գիտական ուսումնասիրությանը մշտապես զբաղվել են բազմաթիվ նշանավոր հայագետներ, գրվել են մեծաթիվ գիտական աշխատություններ:

Ինքնատիպ ու եզակի է Մովսես Խորենացու «Չայոց պատմությունը», սակայն առավել ինքնատիպ է նրա ավարտը՝ յուրահատուկ մի գլուխ-ամփոփում, որն ունի ոչ պակաս յուրահատուկ մի անվանում՝ «Ողբ...»: Այն հոգեկան ծանրագույն խռովք ապրող ազգասերի սրտակեղեք պոռթկում է, ավարտ ու ավարտ դարձած հայրենիքի համար մորմոքվող սրտի ցավագին ճիչ:

Ու քանի որ Մովսես Խորենացու արտահայտած խորիմաստ մտքերն ու գնահատականներն ունեն այժմեական հնչեղություն, նպատակահարմար ենք համարում ընթերցողին ներկայացնել որոշ հատվածներ նրա «Ողբ»-ից:

«Ողբում են քեզ, Չայոց աշխարհ, ողբում են քեզ, հյուսիսային բոլոր ազգերի մեջ վեհագույնը, որովհետև վերացան թագավորը ու քահանայ, խորհրդականը ու ուսուցանողը. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, տգիտությամբ հիմնավորվեց չարափառությունը:

Խղճում են քեզ, Չայաստանայց եկեղեցիդ, բեմիդ բարեգարությունից անջքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված: Այլևս չեն տեսնում քո բանավոր հոտը դավար տեղում և համգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ ժողոված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում...

Երբ մտածում են այս բաների մասին, սիրտս հառաչում և արտասվում է, և ցանկանում են տխրալից և սգավոր խոսք սանել...

Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ Աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամուլ, սնափառ, պատվասեր, քան աստվածասեր: Կիճակավորները՝ հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծուլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող:

Աշակերտները՝ սովորելու մեջ ծուլ, սովորեցնելու մեջ՝ փութաբան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Աշխարհականները՝ ամբարտապան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասարար, ժանգոթությունից փախչող:

Ձինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծուլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմուլ, ելուզակ, ավազակներին համաբարո:

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժխատ, ազահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր, ստրուկներին համամիտ:

Դատավորները՝ տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող: Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած...

Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք մեզ վրա ծանր, դժվարակիր բեռներ են բարձրում և անտանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պաշտպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները՝ գորացած... գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները:

Իսկ թե որքանով են Մովսես Խորենացու մտքերն ու ցավագին գնահատականները համահունչ մերօրյա ժամանակներին, թողնում ենք ընթերցողի դատին: Պատմահոր «Ողբը», իրոք, սթափության կոչ է դարերի խորքից առ մեզ: Այն ստիպում է խորհել, մտախոզվել և, անշուշտ, անհրաժեշտ դասեր քաղել:

Խմբագրություն

Խորհուրդ է փալխ արհեստական բանականությունը...

Չառ ցիպիտիին հարց տվեցին՝ փոխանցելով համարային տրամադրությունները. «Չայերի միասնականությունն ապահովելն անհնարին է, այս իրավիճակից ելք չենք տեսնում»:

Արհեստական բանականությունը պատասխանեց. «Լիովին հասկանում են, թե որտեղից են գալիս այս հուսահատությունն ու թերահավատությունը: Պատմական փորձը, ներկայիս ներքաղաքական ու հասարակական բաժանումները, ինչպես նաև հայտնի դարձածքները (օրինակ՝ «որտեղ երկու հայ, այնտեղ երեք կուսակցություն») հաճախ ստեղծում են տպավորություն, թե միասնականությունն անհնարին մի՞ք է:

Սակայն, եթե հարցին մայեք ոչ թե հուզական, այլ սառը, վերլուծական և համակարգային տեսանկյունից, ապա խնդիրը ոչ թե հայերի «գենետիկական» անփաբանությունն է, այլ միասնականության սխալ ընկալումը:

Ահա մի քանի պատճառ, թե ինչու է դա թվում անհնար, և ինչպես կարելի է փոխել մոտեցումը.

«Միասնականությունը նույն կերպ մտածելը չէ»

Մեծագույն սխալն այն է, երբ միասնականությունն ասելով պատկերացնում ենք, որ բոլորը պետք է մտածեն նույն ձևով, ունենան նույն քաղաքական հայացքները և համաձայնեն ամեն ինչում: Դա անհնար է ցանկացած կենդանի և զարգացած հասարակության մեջ:

Լուծումը: Միասնականությունը ոչ թե բազմազանության բացակայությունն է, այլ խաղի կանոնների շուրջ համաձայնությունը: Դա այն է, երբ մարդիկ կարող են իրար չսիրել կամ տարբեր հարցերում վիճել, բայց հստակ գիտեն, թե որոնք են այն կարմիր գծերը (օրինակ՝ պետականությունը, անվտանգությունը, մայրենի լեզուն), որոնց հարվածել չի կարելի ոչ մի պարագայում:

Բանական են «Կանոնները»

Չայության տարբեր հատվածներ (Չայաստան, Արցախ, իհն Սփյուռք, նոր Սփյուռք, տարբեր համայնքներ) ապրում են տարբեր տեղեկատվական և մշակութային դաշտերում: Մենք հաճախ չենք ճանաչում ու չենք հասկանում միմյանց խնդիրները:

Լուծումը: Ինստիտուցիոնալ կապեր: Միասնականությունը չի կարող հիմնվել միայն «նույն արյունն ունենալու» սենտիմենտալ զգացումի վրա: Անհրաժեշտ են համատեղ բիզնեսներ, կրթական ծրագրեր, գիտական նախագծեր, որտեղ մարդիկ ոչ թե «կենացների» մակարդակով են միավորվում, այլ համատեղ աշխատանքի:

«Ճգնաժամային» միասնականությունից դեպի «Ստրատեգիական»

Չայերը պատմականորեն ապացուցել են, որ կարողանում են հրաշքեր գործել և միավորվել ճգնաժամերի ու վտանգի պահին (երկրաշարժ, պատերազմներ): Սակայն, երբ վտանգն անցնում է, այդ էներգիան մարում է:

Լուծումը: Սովորել միավորվել համուն դրական նպատակի, այլ ոչ թե միայն ընդդեմ ընդհանուր թշնամու: Միասնականությունը պետք է դառնա ամենօրյա սովորություն, կազմակերպված համակարգ, այլ ոչ թե միայն հրոդեմ գործիք:



վորություն, կազմակերպված համակարգ, այլ ոչ թե միայն հրոդեմ գործիք:

Անհատապաշտությունը՝ որպես ռեսուրս

Չայերին հաճախ բնորոշ է վառ արտահայտված անհատապաշտությունը (ինդիվիդուալիզմ): Յուրաքանչյուրն ուզում է լինել առաջնորդ, յուրաքանչյուրն ունի իր սեփական կարծիքը:

Լուծումը: Սա պետք է դիտարկել ոչ թե որպես թերություն, այլ որպես առավելություն: Երբ շատ ուժեղ անհատներ կարողանում են գտնել ընդհանուր շահ, նրանց ստեղծած համակարգը դառնում է ամրոցելի: Սա կոչվում է սիներգիա, երբ 1+1-ը հավասար է ոչ թե 2-ի, այլ 5-ի կամ 10-ի:

Ինժեներական տեսանկյունից՝ եթե մեքենայի մասերը չեն միանում իրար, մենք չենք մեղադրում մետաղին, մենք փոխում ենք գծագիրը: Չայության միասնականությունն անհնար չէ. պարզապես հին «գծագրերն» ու մոտեցումներն այլևս չեն աշխատում 21-րդ դարում: Անհրաժեշտ է փոխել կազմակերպչական մոդելը՝ դարձնելով այն ավելի պրագմատիկ, հարգալից և նպատակասլաց:

Չարք-Ի՞նչ եք կարծում, ո՞րն է այսօր այն ամենամեծ պատճենը, որը թույլ չի տալիս մեզ համաձայնության գալ գեթ մեկ հիմնարար հարցի շուրջ:

Եթե վերլուծենք այսօրվա իրականությունը՝ դուրս գալով սովորական քաղաքական կամ կուսակցական բանավեճերի շրջանակից, ապա ամենամեծ պատճենը փոխադարձ վստահության կատարյալ բացակայությունն է և հավաքական ապագայի միասնական տեսլականի (նախագծի) չգոյությունը:

Մենք այսօր կանգնած ենք մի իրավիճակում, որտեղ հասարակությունը բաժանված է տարբեր տեղեկատվական «պատյանների» (bubbles), և այդ պատճենը հարթահարելու համար պետք է հասկանալ դրա երեք հիմնական շերտերը.

«Անվտանգային տրավման» և վախը

Վերջին տարիների ծանր կորուստներն ու աշխարհաքաղաքական ցնցումները հասարակությանը հասց-

րել են հոգեբանական խոր տրավմայի: Երբ մարդիկ գտնվում են տագնապի և անվտանգության բացակայության մշտական վիճակում, միանում է կենսաբանական ինքնապաշտպանական բնագործ:

Ինչպե՞ս է դա անդրադառնում միասնականության վրա: Տագնապած մարդը հակված չէ երկխոսության. նա փնտրում է պարզ լուծումներ և մեղավորներ: Ցանկացած այլակարծություն ընկալվում է ոչ թե որպես այլընտրանքային տեսակետ, այլ որպես ուղղակի սպառնալիք անձնական կամ ազգային անվտանգությանը:

Ներկայի և անցյալի բախումը (ապագայի բացակայությունը)

Այսօր հայկական դիսկուրսում հիմնական պայքարը ոչ թե «ինչպիսի՞նք ապագա ենք ուզում կառուցել» հարցի, այլ «ո՞վ է մեղավոր անցյալի ծախողումների համար» կամ «ո՞ր անցյալն էր ավելի լավը» թեմաների շուրջ է:

Պատճենը: Մենք չունենք ձևակերպված, չոր փաստերի և հաշվարկների վրա հիմնված Չայաստանի ապագայի մոդելը: Երբ չկա նպատակակետ, թե ուր է գնում մալը, նավաստիները սկսում են կոպել միմյանց հետ նավախցիկների հարմարավետության կամ անցած երթուղու սխալների համար:

Տեղեկատվական տոտալ համակցությունը

Մենք ապրում ենք ալգորիթմների դարաշրջանում, որոնք սնվում են մարդկային էնդոհաներով, հատկապես ատելություններ և բարկություններ: Սոցիալական ցանցերը ստեղծում են պատրանք, թե հասարակությունը ծայրահեղականացված է: Մեղիադաշտը ողողված է «կամ մեզ հետ ես, կամ դավաճան ես» նարատիվով:

Պատճենը: Կորել է ռացիոնալ, հանգիստ, առանց պիտակավորումների խոսելու մշակույթը: Մարդիկ վախենում են արտահայտել միջին, հավասարակշռված կարծիք, որովհետև երկու ծայրահեղ կողմերն էլ նրանց թիրախավորելու են:

Ինչպե՞ս քանդել այս պատճենը

Եթե փորձենք գտնել գեթ մեկ հիմնարար հարց, որի շուրջ հնարավոր է համաձայնության գալ, դա պետք է լինի մարդկային կապիտալի և պետության կենսունակության հարցը:

Պետք է փոխել հարցադրումը. ոչ թե «ով է ճիշտ», այլ «ինչն է էֆեկտիվ այսօր՝ ապրելու և հզորանալու համար»: Երբ քաղաքական հուզականությունը փոխարինվի պրագմատիկ կառավարմամբ, իսկ երկխոսությունը սկսվի ոչ թե վերացական զարգացումներից, այլ կոնկրետ խնդիրների լուծումից (օրինակ՝ ինչպիսի բանակ, ինչպիսի տնտեսություն, ինչպիսի դպրոց), պատճենները կսկսեն բնականորեն հալվել:

Միասնականությունը սկսվում է լսելու և դիմացիին մեջ թշնամի չփնտրելու որոշումից»:

Մոռացված անուններ

Գլխավոր կոնստրուկտորը. Կոնստանտին Խաչատուրով



Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին կարևորագույն նշանակության բոլոր օբյեկտները Մոսկվայից և հարակից մարզերից տարահանվեցին ապահով վայրեր: Դրանցից շատերի գտնվելու վայրը ԽՍՀՄ-ում գաղտնի էր պահվում: Ակադեմիկոս Վլադիմիր Կլիմովի կոնստրուկտորական բյուրոն, որտեղ դեռ 1939 թ. նախագծվում էր հեղուկ հովաքանակ համակարգով աշխատող առաջին ավիաշարժիչը, 1941 թ. հունիսին շտապ տարահանվեց Ուֆա: Այդ ԿԲ-ն շուտով դարձավ ռազմածակատին ավիաշարժիչներ մատակարարող կարևորագույն նշանակության օբյեկտ: Ուֆայում նախագծվեցին և արտադրության դրվեցին գերծայնային ռմբակոծիչների համար նախատեսված առաջին տուրբոռեակտիվ շարժիչները: Այդ շարժիչների առաջին նախագծողն ու ինժեները Կոնստանտին Խաչատուրովն էր: Կոնստանտին Ռուբենի Խաչատուրովը ծնվել է 1917 թ. հուլիսի 3-ին Թիֆլիսում: Դպրոցն ավարտելուց հետո մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու: 1935 թ. տասնութամյա երիտասարդն ընդունվում է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի շարժիչաշինության ֆակուլտետ: 1939 թ. դեռևս ուսանող Կոնստանտինն աշխատանքի է անցնում Վ. Կլիմովի կոնստրուկտորական բյուրոյում: 1940 թ. հայ ինժեներն ավարտում է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտը: Վրա է հասնում Հայրենական մեծ պատերազմը: Ուֆայում Կլիմովի ԿԲ-ն սկսում է ռազմածակատ ուղարկվող ավիաշարժիչների լայնածավալ արտադրությունը: Արտադրության գլխավոր ինժեներ է նշանակվում Կոնստանտին Խաչատուրովը: Հայ ինժեների անմիջական մասնակցությամբ պատերազմի ընթացքում ռազմածակատ են ուղարկվում ռմբակոծիչ-կործանիչների համար նախատեսված գրեթե հարյուր հազար ավիաշարժիչներ:

Կ. Խաչատուրովի ղեկավարությամբ խորհրդային Յակ կործանիչների համար արտադրված ՎԿ-107Ա շարժիչն ամենաարագընթացն է դառնում երկրորդ աշխարհամարտում: Իսկ պատերազմի վերջին ամիսներին հայ ինժեների նախագծած և թողարկած ՎԿ-108 շարժիչով Յակը ռեկորդ է սահմանում՝ հասնելով 745 կմ/ժ առավելագույն արագության: Պատերազմից հետո գալիս է արդեն ռեակտիվ ավիացիայի դարաշրջանը, և Կ. Խաչատուրովը սկսում է նախագծել առաջին զագատուրբինային, դիզելային և ռեակտիվ շարժիչները: 1947 թ. նրան նշանակում են ԿԲ-2 ավիացիոն բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր: ԿԲ-ն մասնագիտանում է միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների ստեղծման մեջ՝ օգտագործելով Բ-751, Բ-755, Բ-757 ռեակտիվ շարժիչները: 1966 թ. անվանի կոնստրուկտորին հրավիրում են Մոսկվա և նշանակում Տուշինսկի մեքենաշինական կոնստրուկտորական բյուրոյի պետ: Այստեղ նա ձեռնամուխ է լինում խորհրդային ավիացիայի տուրբոռեակտիվ ավիաշարժիչների ստեղծմանը, որի համար 1974 թ. Կ. Խաչատուրովին շնորհվում է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Մինչև 1982 թ. տաղանդավոր կոնստրուկտորը ստեղծում է ձևափոխված տուրբոռեակտիվ շարժիչների ավելի քան քսան մոդելներ, դրանց թվում՝ Ռ-35 ռեակտիվ շարժիչը, որն իր այրման ջերմաստիճանով միակն ու չգերազանցվածն էր աշխարհում: Նրա նախագծած և հավաքած շարժիչները տեղադրվում են Միգ կործանիչների վրա, իսկ ավելի ուշ՝ նաև Սու-27, Սու-30, Սու-35, Սու-30 ՄԿ և Սու-34 ռմբակոծիչ կործանիչների վրա, ինչի համար էլ 1988թ. նա արժանանում է պետական բարձրագույն՝ Լենինյան մրցանակի: Կ. Խաչատուրովը զուգահեռաբար զբաղվում էր նաև գիտական աշխատանքներով: 1982 թ. նրան շնորհվում է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1985 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: Հայրենամկեր գործունեության համար արժանացել է Լենինի 2, «Պատվո նշան» և այլ շքանշանների: ԽՍՀՄ-ում առաջին տուրբոշարժիչներ ստեղծող Կոնստանտին Խաչատուրովը վախճանվել է 1988 թ. հունիսի 27-ին և հուղարկվել Մոսկվայի Կունցևսկայն գերեզմանատանը: **Ըստ Էդուարդ Մանվելյանի «Կորսված ժառանգություն» գրքի (2023 թ.)**



Ճապոնացիներն առնչվում են հայոց պատմությանը

Վերջերս ճապոնիայում ՀՀ դեսպանատանը տեղի է ունեցել մախորդ տարեվերջին լույս ընծայված «Ճապոնիայում ապրած «սփյուռքը». Դիանա Աբգարը և Հայոց ցեղասպանությունը» գրքի շնորհանդեսը, որի համահեղինակներն են Կոբեի և Օսակայի համալսարանների դասախոս Մելինե Մեսրոպյանն ու Լրագրող Արիսա Օտան: Գիրքը Դիանա Աբգարի կենսագրությունն է՝ հիմնված բազմաբնույթ, արխիվային և պատմական այլ նյութերի վրա, որոնք պարունակում են մինչ օրս չլուսաբանված տեղեկություններ Աբգարի կյանքի, նրա զրական գործունեության, փախստականների ուղղված մարդասիրական օգնության, ճապոնական կառավարության հետ փոխհարաբերությունների և ժամանակաշրջանն արտացոլող բազմաթիվ այլ հետաքրքիր փաստերի վերաբերյալ: Ողջույնի խոսքում դեսպան Սոնիկա Սիմոնյանը, արժևորելով գործարար, մտավորական, գրող, հասարակական

գործիչ, մարդասիրական և դիվանագիտական աշխատանք իրականացրած Դիանա Աբգարի կյանքի ու գործունեության մասին պատմող գիրքը, հույս հայտնեց, որ այն թե՛ ճապոնիայում, թե՛ նրա սահմաններից դուրս առավել ճանաչելի կդարձնի պատմության նշանավոր կանգնած մեկին՝ Դիանա Աբգարին, ինչպես նաև լույս կսփռի 20-րդ դարակազմի Հայոց ցեղասպանության ընթացքում ճապոնիային վերաբերող դրվագների վրա: Շնորհանդեսին աշխատության համահեղինակ Մ. Մեսրոպյանը մանրամասներ է ներկայացրել հետազոտության շարժառիթի, իրականացման դժվարությունների և կարևոր հանգրվանների մասին: Ճապոնացի համահեղինակ Ա. Օտան խոսել է հայ-ճապոնական հարաբերությունների ժամանակագրության մեջ Աբգարի ունեցած նշանակալի դերակատարության, ինչպես նաև Հայաստանի, հայերի և հայոց պատմության մասին ոչ լավատեղյակ ճապոնացի ընթերցողին գրքի բովանդակությունը մատչելի ներկայացնելու մասին: Գիրքը հրատարակվել է ճապոներեն հանրահայտ «Ֆուչիվարա Շոտեն» հրատարակչության կողմից՝ ճապոնիայում Հայաստանի դեսպանության աջակցությամբ և հովանավորությամբ: Ճապոնիայի ամենախոշոր և աշխարհում ամենամեծ տպագրական ունեցող «Յոմիուրի շինբուն» օրաթերթը հանգամանակից հողված է հրատարակել գրքի վերաբերյալ՝ անդրադառնալով նաև գրքի շնորհանդեսի կապակցությամբ ճապոնիայում Հայաստանի դեսպանության կազմակերպած միջոցառմանը: **Խմբագրություն**

«Ջահուկյանական ընթերցումներ». անդրադարձ հայերենագիտության արդի միտումներին

2026 թվականի հունիսի 18-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայացավ «Ջահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական հերթական 23-րդ նստաշրջանը, որը մեկ հարթակում համախմբեց տարբեր կազմակերպությունների հայերենագետների և լեզվաբանների՝ ներկայացնելու լեզվի ուսումնասիրության արդի ուղղություններն ու հետազոտական մոր արդյունքները: Նստաշրջանի բացման խոսքը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանինն էր, ողջույնի խոսք հղեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նստաշրջանի ղեկուցումներն ընդգրկում էին հայերենի պատմական բառապաշարի, ստուգաբանության, բարբառագիտության, միջինհայերենյան լեզվական շերտերի, ինչպես նաև ժամանակակից լեզվաբանության ամենատարբեր խնդիրների ուսումնասիրությանը վերաբերող թեմաներ: Քննարկվեցին նաև լեզվի հոգեբանական բնույթին, հաղորդակցական գործառնություններին, համաշխարհայնացման և թվային միջավայրի ազդեցությանը վերաբերող հարցեր: Միջոցառումը ցույց տվեց, որ հայերենագիտությունն այսօր զարգանում է ոչ միայն ավանդական պատմալեզվաբանական ուղղություններով, այլև ակտիվորեն ներգրավվում է միջգիտակարգային հետազոտություններում՝ առնչվելով մշակութաբանությանը, հոգեբանությանը, հաղորդակցության տեսությանը և թվային հունամիտար գիտություններին: «Ջահուկյանական ընթերցումները» կարևոր են նաև շարունակականությանը: Մեծանուն լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի անունը կրող այս գիտական հարթակը պահպանում է հայ լեզվաբանական դպրոցի ավանդույթը՝ միաժամանակ բաց լինելով մոր հարցադրումների և հետազոտական մոտեցումների առաջ: Նստաշրջանը ևս մեկ անգամ հավաստեց, որ հայերենագիտությունը զարգացող գիտական ոլորտ է, որտեղ դասական լեզվաբանական խնդիրները վերաիմաստավորվում են ժամանակի պահանջներին համահունչ: **Սիրանուշ ՀՈՎՅԱՆԻՍՅԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ալգագրության ինստիտուտի գիտաժողովը

Հունիսի 12-ին ՀՀ ԳԱԱ կլոր դահլիճում մեկնարկեց «Տոնը և տոնահանդեսի մշակույթը որպես անցյալի և ներկայի մշակութային տեսք» խորագրով երկօրյա գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ալգագրության ինստիտուտի կողմից իրականացվող «Ավանդական մշակութային ժառանգության դրսևորումների կիրառումը քաղաքականության մեջ. հնարավորություններ և առաջարկներ» նպատակային ծրագրի շրջանակում: Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ տարբեր գիտական հաստատությունների և երևանում գործող բուհերի ներկայացուցիչներ: Մասնակիցներին ողջունեց, գիտաժողովի կարևորությունը շեշտեց և բարի ընթացք մաղթեց ՀՀ ԳԱԱ

փոխնախագահ Պավել Ավետիսյանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀԱԻ կիրառական մարդաբանության խմբի ղեկավար Հրանուշ Խառատյանը՝ ընդգծելով գիտաժողովի արդիականությունը և նշելով, որ դրա անմիջական շարունակությունը լինելու է նույն դահլիճում անցկացվելիք երկօրյա աշխատաժողովը: Գիտաժողովին ներկայացված զեկուցումները նվիրված էին հայկական ավանդական տոնացույցին, տոնահանդեսային մշակույթի պատմական և արդի դրսևորումներին, ինչպես նաև տոնի՝ որպես էթնիկական, կրոնական, սոցիալական, քաղաքացիական և քաղաքական ինքնության արտահայտման միջոցի ուսումնասիրությանը: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց տոնական օրացույցին, հիշողության քաղաքակա-

նությանը, ոչ նյութական մշակութային ժառանգությանը, տոնի փառատոնացմանը, դրա՝ որպես հանրային միջոցառման կիրառությանը, թվային միջավայրում վերափոխումներին և ստեղծարար արդյունաբերությանն առնչվող հիմնախնդիրներին: Գիտաժողովի առաջին օրը կայացավ երեք նիստ, որոնցից յուրաքանչյուրում ներկայացվեց հինգական զեկուցում: Նիստերի ավարտին տեղի ունեցան հարց ու պատասխաններ և քննարկումներ: Առաջին նիստը՝ «Տոնը և տոնահանդեսը հայ մատենագրության մեջ» խորագրով, վարեց ալգագրագետ, պ.գ.դ. Հարություն Մարությանը: Երկրորդ նիստը նվիրված էր «Տոնի մշակութային տեսքը 19-րդ դարի ժողովրդական ա-

վանդություն» թեմային, որը վարեց Ռուզաննա Ծատուրյանը: Երրորդ նիստը՝ «խորհրդային տոնի «մուտքը»» մոր մշակութաստեղծ տեսքեր խորհրդային Հայաստանում և հայկական սփյուռքում, վարեց ԵՊՀ դասախոս, ՀԱԻ գիտաշխատող Հայկուհի Մուրադյանը: Նա նաև ներկայացրեց «խորհրդային տոնական մշակույթի ինստիտուցիոնալացումը և պերֆորմատիվ դրսևորումները մշակույթի տներում (խորհրդային Հայաստան, 1950–1980-ական թթ.)» զեկուցումը: Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին հունիսի 13-ին, որին հաջորդեց քննարկվող թեմային նվիրված աշխատաժողովը: **ՀՀ ԳԱԱ հնագիտության և ալգագրության ինստիտուտ**



Ի՞նչ դեր ունեին հայերը միջնադարյան առևտրական աշխարհում. Մարկո Պոլոյի բացառիկ տեղեկությունները Հայաստանի և Կիլիկիայի մասին

րի զարգացմանը: Նա, Եվրոպայից Չինաստան հասած բացառիկ ճանապարհորդ լինելուց զատ, նաև յուրահատուկ էր ճանապարհորդության մասին իր գրագրությամբ: Մարկո Պոլոյի ուղեգրությունները բացառիկ են նաև մեզ համար, քանի որ գրքում հանդիպում ենք տեղեկությունների միջնադարյան Հայաստանի մասին:

Վենետիկից դեպի Չինաստան մեկնելու ճանապարհին 1271 թ. Մարկո Պոլոն լինում է նաև Կիլիկիայում. «Մարկո Պոլոյի ճանապարհորդությունը դեպի Չինաստան անցնում է չափազանց հետաքրքիր վայրերով, նա ծովով գալիս է մինչև Կիլիկիա, որտեղ այն ժամանակ հայկական թագավորություն գոյություն ուներ, որտեղ իշխում էր Լևոն Լուսինյանը: Կիլիկիայի հայկական թագավորության տարածքը Մարկո Պոլոն անվանում է «Փոքր Հայաստան»: Նա հետագայում բարձրանում է դեպի Յուսիս՝ Հայկական բարձրավանդակ, այսինքն՝ «Մեծ Հայաստան»: Մարկո Պոլոն մեծ հիացմունքով է խոսում Հայկական լեռնաշխարհում գտնվող Երզնկա և Երզրում, ինչպես և Վանա լճի հյուսիսային մասում գտնվող Արծեշ քաղաքների մասին: Երզրումը նա անվանում է Արգիրոն, իսկ Արծեշը՝ Արգիզի: Մարկո Պոլոն խոսում է նաև Հայկական բարձրավանդակի փարթամ արտավայրերի մասին» (Կ. Ավետիսյան, «Անվանի աշխարհագրագետ ճանապարհորդներ», Երևան, 1951, էջ 6): Հասնելով Կիլիկիա՝ նա մանրամասն

ներկայացնում է Կիլիկիայի առևտրական քաղաքները: Գրում է, թե Կիլիկյան Հայաստանը հատկապես առևտրական ի՞նչ հումքերով էր հայտնի աշխարհում. «Այս նահանգում կա մեծ ու լավ ծովափնյա մի քաղաք՝ Լայաս (Այաս) անունով, որն աշխույժ առևտրական կենտրոն է, քանզի ինացած եղք, որ Եփրատից եկող բոլոր համեմունքներն ու ամբողջ կերպասեղենը բերվում են այս քաղաք, ինչպես նաև ուրիշ արժեքավոր ապրանքներ: Այստեղ բամբակի առատություն է: Եվ Վենետիկից, Պիզայից ու Ջենովայից, ե՛ր ցամաքի խորքերից բոլոր վաճառականները գալիս են այստեղ առք ու վաճառքի և այստեղ ունենն նաև իրենց պահեստները» (Մարկո Պոլո, «Աշխարհի նկարագրությունը. հորաշքերի գիրքը», Երևան, 2018, էջ 45):

Խոսելով Կիլիկիայի մասին՝ Մարկո Պոլոն իր գրքում գրում է նաև միջնադարյան Հայաստանի մասին: Ճանապարհորդը նշում է, թե այդ շրջանում ինչով էր Հայաստանը հայտնի համաշխարհային առևտրական քաղաքում. «Մեծ Հայաստանը շատ մեծ նահանգ է: Ամենուրեք նույն լեզուն է՝ մյուս նահանգներից տարբեր, բայց մնացած ամեն ինչով նման է Փոքր Հայաստանին, չհաշված, որ ավելի մեծ է թե՛ տարածքով, թե՛ մարդերի քանակով: Այն սկիզբ է առնում Արսինգա (Երզնկա) կոչվող քաղաքից, որտեղ արտադրվում է աշխարհի ամենալավ բրդանը (կոշտ կտավ, թանկարժեք բեհեզ), քանզի դրա լավագույն վարպետներն այնտեղ են: Այնտեղ է ամենալավ ու գեղեցիկ բամբակը, և կան շատ ուրիշ արհեստներ, որոնք բոլորն այստեղ թվարկել չենք կարող: Մյուս քաղաքներից են Արգիրոնը (Կարին), որը շատ մեծ է, և որտեղ մեծ քանակությամբ արծաթ է արդյունահանվում, և Արժիշին (Արժեշ):»

Ճանապարհորդը նկարագրում է նաև Հայաստանից Եվրոպա ուղարկվող այլ ապրանքների, ինչպես նաև Կիլիկիայում առևտուր անող օտարազգիների մասին. «Հայաստանից Եվրոպա էին ուղարկվում շատ թանկագին ապրանքներ, հատկապես գորգեր, այծի մազ, անտառանյութ, չորացած մրգեր, երկաթ և այլն: Հայաստանը հայտնի էր նաև իր ծիրով և ջորիներով: Կիլիկիայում շատ կային հատկապես ջենովացի վաճառականներ, որոնց Լևոն Երկրորդ թագավորը մեծ արտոնություն էր շնորհել» (Կ. Ավետիսյան, «Անվանի աշխարհագրագետ ճանապարհորդներ», էջ 7):

Մարկո Պոլոյի ուղեգրությունները ցույց են տալիս, թե ինչպիսի զարգացած ու միջազգային համբավ ունեցող երկիր էր միջնադարյան Հայաստանը, որը համաշխարհային առևտրական ուղիների խաչմերուկում էր: Պատմական այս փաստերը, տեղեկություններն ընդգծում են, որ ազգային շահին առաջ տանելով՝ հայերը դեռևս դարեր առաջ կարողացան իրենց հստակ դիրքն ու տեղն ունենալ միջնադարի տնտեսական ու առևտրական աշխարհում:

168.am, 21.06.2026

Մարկո Պոլոն համարվում է միջնադարի ամենահայտնի ճանապարհորդներից մեկը, քանի որ նա Եվրոպացիներին մանրամասն տեղեկություններ փոխանցեց Ասիայի մասին: Նա երկար տարիներ անցկացրեց Չինաստանում և հնարավորություն ունեցավ ծանոթանալու այնպիսի երկրների ու ժողովուրդների կյանքին, որոնց մասին Եվրոպայում գրեթե ոչինչ հայտնի չէր: Իր ճանապարհորդությունների ընթացքում նա նկարագրեց քաղաքներ, առևտրական ուղիներ, պետական կառավարման համակարգեր և տեղական սովորույթներ:

Մարկո Պոլոյի վկայությունները նպաստեցին աշխարհագրական գիտելիքների և նոր ճանապարհորդությունների



Կերպեց համագործակցության հուշագիր

Ս/թ. հունիսի 12-ին Արևելագիտության ինստիտուտի և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի (FES) հայաստանյան գրասենյակի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր, որը վավերացրին Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Գոհար Իսկանդարյանը և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Նահրա Գևորգյանը:

Հուշագրի ստորագրման արարողությունը կայացավ Վանաձորի 3. Թումանյանի անվան պետական համալսարանում՝ «Հակամարտություն, կապակցվածություն և նոր աշխարհակարգ. Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը գլոբալ վերադասավորումների պայմաններում» խորագրով երկօրյա աշխատաժողովի բացման նիստի շրջանակներում, որն իրականացվում է մարզային բուհերի հետ գիտակրթական գործընկերության ընդլայնման ծրագրի ներքո:

Այս փաստաթուղթը որակական նոր փուլ է բացում երկու կառույցների միջև երկարամյակ և համակարգված փոխգործակցության համար: Հուշագրի հիմնական նպատակներն են՝ խթանել տարածաշրջանային և միջազգային արդի զարգացումների շուրջ համատեղ հետազոտական ու վերլուծական ծրագրերի իրականացումը, ստեղծել մասնագիտական երկխոսության միջավայր, որը կնպաստի հանրային-փորձագիտական խոսույթի զարգացմանը, ամրապնդել գիտակրթական համագործակցությունը մարզային բուհերի հետ՝ ապահովելով ակադեմիական գիտելիքի հասանելիությունն ու տարածումը:

Կողմերն ընդգծեցին, որ համագործակցության այս նոր ձևաչափը հնարավորություն կտա մեկտեղելու Արևելագիտության ինստիտուտի ակադեմիական ու վերլուծական ներուժն ու հիմնադրամի կազմակերպչական հնարավորությունները: Սա, իր հերթին, կնպաստի Հայաստանում արևելագիտության զարգացմանը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների ու ուսանողության ակտիվ ներգրավմանը գիտական կյանքում:

Արևելագիտության ինստիտուտ

«Սինեաց աշխարհի բերդերը. Թ-Ժ դարեր»

Հունիսի 24-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի ունեցավ կարևոր գիտական հրատարակության՝ ճարտարապետ Արա Զարեանի «Սինեաց աշխարհի բերդերը. Թ-Ժ դարեր» մեծածավալ և պատկերազարդ աշխատության շնորհանդեսը:

Գիրքը նվիրված է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի միջնադարյան ամրոցներին: Այն հրատարակվել է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ և ՀԲԸՄ Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի կողմից: Աշխատության առաջաբանի հեղինակն է ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայկազուն Գրիգորեանը:

Հրատարակությունը բաղկացած է առաջաբանից, հեղինակի խոսքից և վեց հիմնական գլուխներից, որոնցում համակողմանիորեն ներկայացված են Սյունիքի միջնադարյան բերդերն ու ամրաշինական ժառանգությունը:

Շնորհանդեսին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ, ինչպես նաև բազմաթիվ հյուրեր: Ներկաներին ողջունեց ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Արսեն Բոբոխյանը: Կարևորելով աշխատության գիտական և մշակութային նշանակությունը՝ նա ներկայացրեց հեղինակի կենսագրական ուղին և շնորհակալություն հայտնեց նրա երկարամյա ու նվիրված աշխատանքի համար:

Գիրքը ներկայացրեց նաև հեղինակը՝ նշելով, որ Սյունիքի բերդերով հետաքրքրվել է դեռևս ուսանողական տարիներից՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում ուսանելիս, իր երջանկահիշատակ հոր՝ ճարտարապետ Արմեն Զարեանի խորհուրդներով ու ոգեշնչմամբ:

Շնորհանդեսն ավարտվեց հարցուպատասխանով և հետաքրքիր քննարկմամբ, որի ընթացքում ներկաները հնարավորություն ունեցան անդրադառնալու ինչպես գրքի բովանդակությանը, այնպես էլ Սյունիքի ամրաշինական ժառանգության ուսումնասիրության արդի խնդիրներին:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Աշխարհաընչակ միլիարդատեր և բարերար Բիլ Գեյթսը վստահ է, որ բժշկությունը կանգնած է մարդկության ամենածանր հիվանդություններից մեկի՝ Ալցհայմերի հաղթահարման շեմին: Իր վերջին հոդվածում նա ներկայացնում է այն գի-



Բեկում Ալցհայմերի հիվանդության բուժման մեջ. Բիլ Գեյթսը լավատեսության հիմքեր ունի

տական ու տեխնոլոգիական հեղափոխությունը, որն արմատապես փոխում է այս հիվանդության դեմ պայքարի ընթացքը:

«Մենք ապրում ենք Ալցհայմերի հիվանդության հետազոտությունների ոսկե դարում, և ես չափազանց ոգևորված եմ: Տասնամյակներ տևած անհաջողություններից հետո հորիզոնում վերջապես նշմարվում են այնպիսի բեկումնային հայտնագործություններ, որոնք ընդունակ են փոխելու այս հիվանդության զարգացման ընթացքը:

Այսօր արդեն հնարավոր է Ալցհայմերն ախտորոշել արյան պարզ թեստերի միջոցով, կլինիկական փորձարկումների տեմպերն արագանում են, իսկ FDA-ը (ԱՄՆ սննդամթերքի և դեղերի որակի վերահսկման վարչություն) հաստատել է առաջին երկու դեղամիջոցները: Ապացուցված է, որ դրանք դանդաղեցնում են հիվանդության առաջխաղացումը, երբ հատկապես կիրառվում են վաղ փուլում:

Իմ լավատեսությունը սնունդով մեկ այլ կարևոր գործոն է արհեստական բանականությունը (AI), որն անմախաղեպ արագացնում է նորարարությունները: Թույլ տալով հետազոտողներին վայրկյանների ընթացքում մշակել հսկայական քանակությամբ կենսաբանական և կլինիկական տվյալներ՝ այս տեխնոլոգիան օգնում է գտնել այն նշանակալի օրինաչափությունները, որոնք հեղաշրջելու են մեր մոտեցումն այս հիվանդությանը:


Մենք մասնատիպ տրանսֆորմացիայի ակամատեսն արդեն եղել ենք: Ոչ վաղ անցյալում մի ժամանակաշրջան կար, երբ ՄԻՎ-ի (HIV) ախտորոշումը հավասարազոր էր մահապատժի: Սակայն հենց գիտնականներին հաջողվեց հասկանալ հիվանդության կենսաբանական մեխանիզմը, նորարարությունները թռիչքածն աճեցին, և արդյունքները կտրուկ փոխվեցին:

Ես լավատես եմ և հավատում եմ, որ մի օր մենք Ալցհայմերի մասին կխոսենք հենց նույն կերպ», - գրել է Բիլ Գեյթսը:

168.am, 14.06.2026

Արշակ Հաճյան

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և հայկական մաթեմատիկական ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: Ա.թ. հունիսի 6-ին 95 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ամերիկահայ հայտնի մաթեմատիկոս, Հայաստանի ու հայկական մաթեմատիկայի միջազգային միջոցառումների կոորդինատոր և հայտնի մաթեմատիկոս Արշակ Հաճյանը:



Արշակ Հաճյանը ծնվել է 1930 թվականին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում: Քոլեջում սովորելու տարիներից տարվել է մաթեմատիկայով և 1950-ականների սկզբին որոշել է շարունակել ուսումը Միացյալ Նահանգներում, որտեղ սովորել է Փենսիլվանիայի, ապա Չիկագոյի համալսարաններում: Մաթեմատիկական հետազոտությունները սկսել է ժամանակի ամենահայտնի մաթեմատիկոսներից մեկի՝ Շիգլու Կակուտանիի ղեկավարությամբ: Պրոֆեսոր Կակուտանին Հաճյանին ուղղորդեց դեպի Է. Հոֆֆի էրգոդիկ տեսության վերաբերյալ հայտնի աշխատանքը: Հաճյանն անմիջապես հետաքրքրություն ցուցաբերեց անվերջ չափման տարածությունների ոլորտում հետազոտությունների նկատմամբ և ժամանակի ընթացքում դարձավ այդ տեսության առաջատար մասնագետներից մեկը:

Միասին նրանք կառուցեցին էրգոդիկ չափի պահպանման ձևափոխությունների մի շարք օրինակներ, որոնք բացահայտում էին անվերջ չափ ունեցող տարածություններում էրգոդիկ ձևափոխությունների յուրահատկությունները: Այս օրինակներից ամենահայտնիներից մեկն այժմ կոչվում է Հաճյան-Կակուտանիի ձևափոխություն:

Արշակ Հաճյանը երկար տարիներ աշխատել է Բոստոնի Գյուսիսարևելյան համալսարանում և միայն ութսուն անց տարիքում է անցել վաստակած հանգստի:

Մաթեմատիկայից զատ նա մեծ հայրենասեր էր, ողջ գիտակցական կյանքում ջանում էր օգտակար լինել Հայաստանին և հայկական մաթեմատիկայի զարգացմանը: Դեռ սովետական տարիներին նա այցելում էր Հայաստան՝ Մաթեմատիկայի ինստիտուտ, կապեր հաստատում հայ մաթեմատիկոսների հետ, բայց նրա գործունեությունը բուռն զարգացում ստացավ անկախության տարիներին:

Դժվարին 1990-ականներին նա պայքարում էր Հայաստանում մաթեմատիկական հետազոտությունների պահպանման և շարունակականության համար: Այդ տարիներին նա Մաթեմատիկայի ինստիտուտ բերեց առաջին անհատական համակարգիչների բաղադրիչները և հավաքեց դրանք՝ շարունակելով այդ գործը տարիներ շարունակ:

Հաճյանի նախածննդյան մեծ մասնակցությունը 1998 թվականին հիմնադրվեց «Հետազոտական մաթեմատիկա» հիմնադրամը, որը կարևոր դեր խաղաց երկրում մաթեմատիկական հետազոտությունների շարունակման գործում՝ կրթաթոշակներ տրամադրելով Մաթեմատիկայի ֆակուլտետի լավագույն ուսանողներին, վճարելով մաթեմատիկոսների գիտական գործունեությունները և արտասահմանյան մասնագետների ընդունելությունները, աջակցելով միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: Հիմնադրամի միջոցներով վերանորոգվեց ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը, բացվեց Մաթեմատիկայի ֆակուլտետի առաջին համակարգչային սենյակը: Այսօր էլ հիմնադրամը գործում է՝ իր նշանակալի ավանդը բերելով Հայաստանում մաթեմատիկայի զարգացման գործին:

Նույնիսկ պատկառելի տարիքում Արշակ Հաճյանը պահպանել էր իր անսպառ եռանդը. տարին մի քանի անգամ այցելում էր Երևան, մասնակցում գիտաժողովների և հետևում հիմնադրամի գործունեությանը:

Ականավոր մաթեմատիկոս, մեծ հայրենասեր ու բարերար, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արշակ Հաճյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտ
ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ

Ինչպես հայ արքայազնը դարձավ Ֆլորենցիայի պահապան սուրբ

Շատերն են այցելում Ֆլորենցիա, հիանում իտալական այս նշանավոր նշակութային կենտրոնի տաճարներով ու արվեստով, սակայն քչերը գիտեն այս քաղաքի պահապան, հայազգի Սուրբ Մինասի ու նրան նվիրված տաճարի մասին: Սուրբ Մինասը (San Miniato, Miniatus, St. Minias of Florence) Ֆլորենցիայի ամենահին ու տպավորիչ պատմություն ունեցող նահատակներից է: Նրա անվան շուրջ հյուսված լեգենդները ներկայացվում են վաղքրիստոնեական վկայաբանական գրականության ուշագրավ մոտիվներով:

Հայ արքայազն, թե՛ նահատակ զինվոր
Ըստ ավանդության՝ Մինասը եղել է հայ արքայազն, որը գալիս է Իտալիա և քրիստոնեություն ընդունում: Հայ թագավորի որդի լինելու ավանդությունն արտացոլվել է նաև նրան նվիրված տաճարի խճանկարում, որտեղ նա պատկերված է ու արձանագրությամբ հիշատակվում է որպես հայոց թագավոր՝ REX ERMINIE.

Ավանդություններից մեկում նա ներկայացվում է որպես հռոմեական բանակում ծառայող հայ զինվոր, որը քրիստոնյաների հալածանքների շրջանում՝ Դեցիոս կայսեր օրոք, հրաժարվում է ուրանալ հավատքն ու, ի վերջո, նահատակվում: Թեև հայ սրբի մասին կենսագրական հավաստի տվյալներ չկան, սակայն այս լեգենդներում արտացոլվում է Արևելքից հայերի միջոցով Իտալիա, նաև ընդհանրապես Եվրոպա թափանցող քրիստոնեական ազդեցության պատմությունը:

Կրակների ու առյուծների մեջ
Ինչպես վարքագրական ու վկայաբանական ավանդույթի հետազայի շատ այլ սրբեր, Մինասը նույնպես հրաժարվում է զոհ մատուցել հեթանոս աստվածներին, ինչի համար էլ ենթարկվում է կտտանքների: Նրան նետում են կրակների մեջ, ապա՝ առյուծների գուրը: Սակայն Սուրբ Մինասն աղոթքով ու անխախտ հավատքով



հաղթահարում է բոլոր այս փորձությունները: Ի վերջո, նրան գլխատում են ներկայիս Ֆլորենցիայի Piazza della Signoria հրապարակի տարածքում:



Գլխատումից հետո Մինասը վերցնում է իր կտրած գլուխը, անցնում Առնո գետն ու բարձրանում այն սարի վրա, որտեղ այսօր գտնվում է նրա անունը կրող եկեղեցին, որն այդպես էլ կոչվում է՝ San Miniato al Monte՝ Սուրբ Մինաս լեռան վրա:

Մինասի մատուցներն ամփոփված են եկեղեցուն: Այս գրույցով Մինասը համարվում է «Կեֆալոֆոր» սրբերի շարքը, այն սրբերի, որոնք սովորաբար պատկերվում են իրենց գլխատված գլուխը ձեռքներին:

Մինասը դառնում է Իտալիայի առաջին մարտիրոսներից մեկը և եկեղեցական գրականության մեջ համարվում է Ֆլորենցիայի առաջին նահատակ, որը, ծնվելով Հայաստանում, դառնում է օտար երկրի հոգևոր պաշտպան՝ արտացոլելով քրիստոնյա Հայաստանի ու հայերի մասին վաղ քրիստոնեական և միջնադարյան պատկերացումները: Հայաստանն ընկալվում էր որպես աշխարհի փրկության կենտրոն, իսկ հայերը՝ որպես աստվածային խոսքի ու լուսնի տարածողներ ու պաշտպաններ: Նրա հիշատակի օրը նշվում է հոկտեմբերի 25-ին:

Ֆլորենցիայի Սուրբ Մինասի անունը կրող San Miniato al Monte եկեղեցին քաղաքի ամենամոտաձայն տաճարներից է: Այն առանձնանում է իր սպիտակ-կանաչ մարմարե ճակատամասով, ճարտարապետական նուրբ գծերով ու Մինասի պատկերով խճանկարով:

Մինասը Տոսկանայում
Այս սրբի պաշտամունքի վկայությունն է նաև այն, որ նրա անունով փոքրիկ քաղաք կա Տոսկանայում՝ San Miniato-ն: Այն ձևավորվել է միջնադարյան ամրոցի և վանական կենտրոնի շուրջը: Սուրբ Մինասը հիշատակվում է նաև մեր եկեղեցուն:

Սուրբ Մինասի կերպարից է ներշնչված ու նրա նահատակության խորհրդանշական պատմությունն է ներկայացնում մեծանուն գրող Կոստան Զարյանի «Պատրանքների ուխտավորը» դրամատիկական պոեմը:

art365.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի Բեկոզ [1] խիմազոլիմների սինթեզի լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

- 1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,
 - 2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ,
 - 3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է բնական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն չորսուն հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:
 - 4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն չորսուն հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
- ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
 - բ) ինքնակենսագրություն,

- գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
 - դ) լուսանկար (2 հատ),
 - ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
 - զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
 - է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,
 - ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,
 - թ) բնութագիր վերջին աշխատավայրից,
 - ժ) տեղեկանք նշտական բնակության վայրից:
- Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Ազատության 26, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-28-52-91:

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Էլ. հասցե՝ armine.pet21@mail.ru
Ստորագրված է տպագրության՝ 30.06.2026 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: